ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«7» մայիսի 2018 թվականի N 165-Ա

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 91-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Վարուժան Արամի Մարգարյանի (ծնված՝ 1953 թվականին) և ընտանիքի՝ Աիդա Անուշավանի Կարապետյանի (ծնված՝ 1959 թվականի ապրիլի 25-ին), Ռուզաննա Վարուժանի Մարգարյանի (ծնված՝ 1981 թվականի ապրիլի 25-ին), Անուշ Վարուժանի Մարգարյանի (ծնված՝ 1982 թվականի օգոստոսի 16-ին), Գուրգեն Վարուժանի Մարգարյանի (ծնված՝ 1986 թվականի ապրիլի 27-ին), Արամ Վարուժանի Մարգարյանի (ծնված՝ 1989 թվականի հունիսի 8-ին) դիմումը, որով ցանկություն են հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 14-րդ նրբանցքի թիվ 12 հասցեի տնամերձ հողամասում (հիմք՝ «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից 2017 թվականի դեկտեմբերի 6-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը) ինքնակամ կառուցված շինությունները և ավել օգտագործվող 137,5 քառ.մետր մակերեսով հողամասը:

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Վարուժան Արամի Մարգարյանի ընտանիքի կողմից փաստացի օգտագործվող հողամասի մակերեսը կազմում է 837,5 քառ.մետր՝ փաստաթղթերում ամրագրված 700,0 քառ.մետր մակերեսի փոխարեն և սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 14-րդ նրբանցքի թիվ 12 հասցեի տնամերձ հողակտորում 2008 թվականին ինքնակամ կառուցել է սան.հանգույց և ծածկ՝ 24,85 քառ.մ ընդհանուր արտաքին մակերեսով:

Վարուժան Արամի Մարգարյանի ընտանիքի կողմից ինքնակամ զբաղեցված հողակտորը համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, ինչպես նաև հողամասը ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում:

Վարուժան Արամի Մարգարյանի ընտանիքի կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 14-րդ նրբանցքի թիվ 12 հասցեի տնամերձ հողակտորում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վարուժան Արամի Մարգարյանի ընտանիքի կողմից փաստացի ավել օգտագործվող 137,85 քառ.մետր մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են Ջրվեժ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Վարուժան Արամի Մարգարյանի ընտանիքին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Ազատության փողոցի 14-րդ նրբանցքի թիվ 12 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները համարել օրինական:

4. Սահմանել, որ հողամասի սեփականատերերը.

1)սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի համապատասխան հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 38 766 (երեսունութ հազար յոթ հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2)իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

5. Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

7. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2018 թվականի մարտի 20-ի «Ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի օրինականացման մասին» թիվ 91-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 7
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մայիսի 2018 թվականի N 166-Ա

## ԳԵՂԵՑԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 27-րդ փողոցի թիվ 7 տան բնակիչ Գեղեցիկ Գուրգենի Մելքոնյանի ընտանիքի վերաբերյալ և հաշվի առնելով այն, որ 2017 թվականի գարնանը տրավմայի հետևանքով վնասվել է ողնաշար-ողնուղեղային համակարգը, ստացիոնար բուժման նպատակով գտնվել է բժիշկների հսկողության տակ, ներկայումս հանդիսանում է 2-րդ կարգի հաշմանդամության թոշակառու, ամուսինը չի աշխատում, ներկայումս մեկնել է ՌԴ՝ արտագնա աշխատանքի, նրանց խնամքի տակ են երկու անչափահաս երեխաները, ծնված 2006 և 2012 թվականներին, բնակվում է ամուսնու ծնողների հետ նույն հարկի տակ, ընդ որում՝ ամուսնու հայրը թոշակառու է, չի աշխատում, ամուսնու մայրը տնային տնտեսուհի է, ներկայումս զբաղվում է երեխաների խնամքով և դաստիարակությամբ և ընտանիքի սոցիալական վիճակից ելնելով Գեղեցիկ Գուրգենի Մելքոնյանը դիմել է համայնքապետարան՝ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով, ***որոշում եմ.***

Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ բյուջեի համապատասխան հոդվածից Գեղեցիկ Գուրգենի Մելքոնյանի ընտանիքին ցույց տալ դրամական օգնություն՝ 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 10
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մայիսի 2018 թվականի N 167-Ա

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Կարեն Համլետի Սարգսյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի Այգեգործական զանգվածի 14-րդ թաղամասի թիվ 1 հասցեի հողակտորում՝ կադաստրային համար 07-042-196-009, այգետնակի վերակառուցման և տարածքի պարսպապատման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Արամազդ Մարգարյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թ. մայիսի 10
գ. Ջրվեժ